ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ (1890—1920 թթ.)

Ա. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

Հ. Յ. Դաշնակցության ավելի քան հարյուրամյա պատմության ամենաբարդ ու ամենաբեղմնավոր շրջանը, անկասկած, առաջին երևանամյակն է՝ (1890—1920 թթ.), քանզի Հայաստանի առաջին հանրապետության անկումից և դրա մի հատվածի խորհրդայնացումից հետո նա մատնվեց հարկադիր վտարանդիության, և իր գործունեությունը սահմանափակվեց փաստորեն զուտ սփյուռքահայության (գաղթաշխարհի) շրջանակներում։

Հ. Յ. Դաշնակցությունն կուսակցության սկզբնավորումից (1890 թ.) մինչև Հայաստանի առաջին հանրապետության անկումը (1920 թ.) ընկած ժամանակահատվածում ընդունվել է երկու ծրագիր՝ 1892 և 1907 թթ. և հրավիրվել է կուսակցության ինն ընդհանուր ժողով (1892, 1898, 1904, 1907, 1909, 1911, 1913, 1914 և 1919 թ.)[1]։ Այդ ընդհանուր ժողովներում, կուսակցության կանոնադրական պահանջների շրջանակներում, որպես կանոն, գործող ծրագիրը առանձին խմբագրումների ու սրբագրումների է ենթարկվել, ժամանակաշրջանի պահանջների թելադրանքով որոշվել են կուսակցության ռազմավարական և մարտավարական բնույթի նոր սկզբունքներն ու դիրքորոշումները։

Հետագա ժամանակաշրջանում ևս 1907 թ. ծրագիրը մնաց փաստորեն անփոփոխ, եթե չհաշվենք երկու լուրջ խմբագրական սրբագրումները (փոփոխությունները)[2]։ Մասնավորապես կուսակցության 9-րդ ընդհանուր ժողովի որոշման համաձայն խնդիր դրվեց հաջորդ՝ 10-րդ, ընդհանուր ժողովում նոր իրողությունների հիման վրա հետաձգումներ անել։ Կուսակցության ծրագրի քաղաքական ուղեգծում և 1925 թ. հրատարակվեց կուսակցության ծրագիրը՝ հաստատված 10-րդ ընդհանուր ժողովի կողմից[3]։ Իսկ կուսակցության ծրագրի «Ընդհանուր տեսություն» բաժինը խմբագրական վերամշակման ենթարկվեց արդեն մեր ժամանակներում՝ 1982 թ., կուսակցության 22-րդ ընդհանուր ժողովի կողմից[4]։

Դաշնակցության պատմությունը շարադրելու համար առանձնակի կարևորություն ունի, մասնավորապես, նրա ընդհանուր ժողովների և դրանցում ընդունված ծրագրային փաստաթղթերի ուսումնասիրումը, քանզի այդ ծրագրերը, ռազմավարական և մարտավարական նշանակության որոշումներն են եղել այն կողմնորոշիչները, որոնցով առաջնորդվել է Հ. Յ. Դաշնակցությունը։ Այդ ուղղությամբ արված առաջին քայլերից մեկը կարելի է համարել Գ. Խուդինյանի գրքույկը՝ նվիրված Դաշնակցության առաջին ընդհանուր ժողովին[5], ինչպես նաև առանձին ռիտական հանդեսներում լույս տեսած հոդվածները[6]։

Հ. Յ. Դաշնակցության ծրագրերում սկզբունքային նշանակություն ունեն մի շարք հիմնարար այնպիսի հարցեր ու հասկացություններ, ինչպիսիք են՝ «սոցիալ-քաղաքական ազատություն», «հայապահպանություն», «ազգային ինքնապաշտպանություն», «հեղափոխություն», «ընկերվարություն», «համայ-

---

1 Հրաչ Տասնապետյան, Հ. Յ. Դաշնակցությունը իր կազմությունեն մինչև ԺԸ Ընդհանուր ժողովը (1890—1924), Աթենք, 1988, էջ 26։

2 Նույն տեղում, էջ 32։

3 Հ. Յ. Դաշնակցություն, ծրագիր (հաստատված ԺԸ Ընդհ. ժողովի կողմից), Ժնև, 1925։

4 Հ. Յ. Դաշնակցություն, ծրագիր (հաստատված ԻԲ) 22 Ընդհ. ժողովի կողմից, 1982։

5 Գևորգ Խուդինյան, Հայ Յ. Դաշնակցության առաջին Ընդհ. ժողովը, Երևան, 1992։

6 ՀՀ ԳԱ Լրաբեր հաս. գիտ., 1990, № 6, 1991, № 2 և այլն։

նացում», «ապակենտրոնացում», «ինքնավարություն», «անկախություն» և այլն։ Նկատի ունենալով, որ մեկ հոդվածի շրջանակներում հնարավոր չէ համակողմանիորեն վեր հանել ոչ միայն կուսակցության այս կամ այն ծրագիրն ընդհանրապես, այլև զուտ վերը թվարկված առանցքային հասկացությունների իրենց զարգացման և կոնկրետ մարմնավորման մեջ, ստորև կանգ կառնենք և կքննենք մի այնպիսի հույժ արդիական հասկացություն, ինչպիսին անկախության գաղափարն է Դաշնակցության ծրագրային փաստաթղթերում։ Դաշնակցությունը (ի տարբերություն հայ քաղաքական որոշ կուսակցությունների) միանգամից չի հանգել անկախության գաղափարին և իր ծրագրային առաջին փաստաթղթերում չի դրել անկախության պահանջ, թեև նրա մտայնության մեջ և ըմբռնումներում մշտապես կենսարթուն է եղել այդ գաղափարը։

XIX դ. երկրորդ կեսից սկսած, ազգային ինքնագիտակցության ու ինքնաճանաչման որակապես նոր վերելքի շրջանում, երբ աշխարհի նախկինում ճնշված և պետականազուրկ շատ ազգեր ու ժողովուրդներ անկախություն ձեռք բերեցին, հայ հասարակական-քաղաքական մտքում ևս անկախության գիտակցությունը աստիճանաբար սկսեց իրական կերպարանք ստանալ։

Ազատության գաղափարն անբաժանելի է անկախության գաղափարից։ Հայ ազատագրական գաղափարաբանության մշակների ուշադրության կենտրոնում ընդհանրապես կանգնած են եղել այդ երկու հասկացությունները։ Ժողովրդի և հայրենիքի ազատագրության ռազմավարական հիմնականը և վերջնական հանգրվանը վերջին հաշվով անկախությունն էր, թեև այդ ժամանակներում Հայաստանի անկախությունը հայ գործիչներից շատերին դեռևս պատկերանում էր որպես հեռավոր երազանք։

Հայ քաղաքական կուսակցություններից առաջինը հնչակյաններն իրենց ծրագրում մտցրեցին «Թուրքահայաստանի քաղաքական անկախության» և պատմական Հայաստանի երեք հատվածներից անկախ «Մեծ Հայաստան» ստեղծելու պահանջը[7]։ Ընդսմին, հնչակյանների համար Հայաստանի քաղաքական անկախությունը վերջնանպատակ չէր, այլ լոկ անհրաժեշտ նախապայման հայ ժողովրդի քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքի արմատական վերափոխությունների համար[8]։

Սակայն հաշվի առնելով Հայաստանի աշխարհաքաղաքական պայմանները և իրար դիմակայող ուժերի հարաբերակցությունը, ինչպես նաև ներքին ու արտաքին մի շարք աննպաստ գործոններ՝ դժվար չէ տեսնել, որ ժամանակաշրջանի այդ կտրվածքում, գործնականում, շատ դժվարին խնդիր էր, եթե չասենք գրեթե անհնարին, ոչ միայն Հայաստանի անկախության ձեռք բերումը, այլև, ինչպես ցույց տվեց Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի գործադրման պատմությունը, քիչ թե շատ բարենորոգումներ կատարելը։

Ըստ ամենայնի, կարծում ենք. որ այս ամենը հաշվի էին առել 1890 թ. ամռան վերջին Թիֆլիսում հեղափոխական բազմաթիվ խմբակների միակցության շնորհիվ ասպարեզ իջած «Հայ Յեղափոխականների Դաշնակցության» գաղափարական և կազմակերպական ղեկավարները, երբ Արևմտյան Հայաստանի ու արևմտահայության ազատագրության համար կյանքի և մահվան կռիվ հայտարարելով թուրքական կառավարությանը, բոլոր բռնացողներին ու հարստահարողներին, այնուամենայնիվ, գիտակցաբար անկախության պահանջ չեն դրել։ Այս առնչությամբ, անգամ դաշնակցության գաղափարական հակառակորդներից՝ սպեցիֆիկ Բ. Իշխանյանը համեմատության մեջ դնելով դաշնակցության և հնչակյանների ծրագրերը, եզրահանգում էր. «Մենք միշտ ավելի բարձր ենք գնահատել և պոզիտիվ արժեք վերագրել Դաշնակցության տաճկահայ ծրագրին, քան Հնչակյան տաճկահայ ծրագրի մերձավոր ու հեռավոր նպատակների ցնորամիտ ուտոպիաներին»[9]։

---

7 Հնչակ, ժնև, 1887, № 1 (նոյեմբեր), Արսեն Կիտուր, Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության, 1887—1962, հ. Ա, Պեյրութ, 1962, էջ 32—33։

8 Գ. Լազյան, Հայաստան և Հայ Դատը, Երևան, 1991, էջ 73։

9 Բ. Իշխանյան, Ազգային արոդրեսը և դասակարգային շահը, Թիֆլիս. 1908, էջ 165։

Արդարև, այդ ժամանակներում հայ ժողովրդի մեջ, որքան էլ բաղձալի լիներ անցյալի անկախ պետականության վերհուշը, այնուամենայնիվ, ժողովուրդն իր ճնշող մեծամասնությամբ, Հայաստանի անկախության խնդիրը բացահայտ չի դրել և առկա պատմաքաղաքական պայմաններում նա դեռևս դրան պատրաստ չէր ո՛չ քաղաքականապես, ո՛չ տնտեսապես, ո՛չ էլ հոգեբանորեն։

Հ. Յ. Դաշնակցության առաջին օրագրային փաստաթուղթը՝ «Մանիֆեստը», որը հավանաբար գրել է Քր. Միքայելյանը, կուսակցության հիմնադիր ժողովից անմիջապես հետո՝ 1890 թ. սեպտեմբերին[10], հայ հեղափոխական խմբերին կոչ էր անում «Միացնել բոլոր ուժերը՝ նպատակ դնելով Թուրքահայաստանի քաղաքական և տնտեսական ազատությունը»[11]։ Այս առաձգական ու տարողունակ ձևակերպությունը կարմիր թելի պես անցնում է նոր ձևավորված կուսակցության հետագա դրեթե բոլոր ծրագրային փաստաթղթերում։

Ինչպես այս կոչ-մանիֆեստում, այնպես էլ 1892 թ. կուսակցության առաջին ընդհանուր ժողովում ընդունված և 1894 թ. «Դրոշակում» լույս տեսած առաջին ծրագիր-կանոնագրում ոչ մի կոնկրետ պահանջ (հիշեցում) չկա Թուրքահայաստանի քաղաքական անկախության մասին։ Անդրանիկ ծրագրի գլխավոր բանաձևը դարձյալ մնում էր հեղափոխական (ապստամբության) ճանապարհով (միջոցով) Տաճկահայաստանում քաղաքական և տնտեսական ազատության հասնելու նպատակը[12]։ Այստեղ մատնանշվող «քաղաքական ազատություն» արտահայտության տակ հազիվ թե կարելի է հասկանալ «ազատագրության», «անկախության» նպատակ։ Տարակույս չկա, որ այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե Արևմտյան Հայաստանի քաղաքական ազատագրությանը, այլ քաղաքական-ռամկավարական բնույթի ազատություններին։ Դա երևում է նրանից, որ վերը նշված պլատֆորմային հիմնապահանջին հաջորդող թվով 11 ենթապահանջներիր և ոչ մեկում հիշեցում և ակնարկ չկա Հայաստանի ազատագրության մասին։ Դրանցում պարզապես թվարկվում են միայն քաղաքական-քաղաքացիական, ընկերային-տնտեսական և կրոնամշակութային բնույթի ազատություններ ու պահանջներ[13]։ Ճիշտ է նկատում սփյուռքահայ պատմաբան և քաղաքական գործիչ Հ. Տասնապետյանը, գտնելով, որ այստեղ խոսքը ժողովրդավար վարչակարգի հաստատման, ռամկավար ազատությունների. օրենքի առջև տարբեր ազգերի հավասարության, հողի արդար բաշխման, համայնական սկզբունքների և այլնի մասին է[14]։

Ինչ վերաբերում էր «ապստամբությանը» պարագային, սակայն հանուն ազատության օսմանյան անարգ բռնապետության դեմ պայքարի ավելի գործոն միջոց հնարավոր չէր պատկերացնել, քան ապստամբությունը կամ հեղափոխությունը։

Որ դաշնակցության ծրագրերում Արևմտյան Հայաստանի քաղաքական անջատման ու անկախության խնդիր չի դրվել՝ ամենից առաջ հաստատվում է կուսակցության ծրագրային նպատակադրումների իրագործմանը միտված ենց պրակտիկ գործունեությունից։ Ինքնին հասկանալի է, որ ժամանակաշրջանի այդ կտրվածքում անկախության պահանջը ոչ միայն իրական չէր, այլև՝ վտանգավոր։ Դաշնակցության գաղափարաքաղաքական ղեկավարությունը իր մշակած ծրագրերում, խոսելով Հայաստանի քաղաքական և տնտեսա-

---

10 Ա. Գյուլխանդանյան, Հ. Յ. Դաշնակցության առաջին ծրագիրը և նրա հեղինակները, Աթենք, 1987, էջ 31։

11 Գ. Լաղյան, նշվ. աշխ., էջ 67։

12 Դրոշակ, 1894, № 11, Դիվան Հ. Յ. Դաշնակցության, հ. 1, Պոսթն, 1934, էջ 100, Ա. Գյուլխանդանյան, նշվ. տշխ., էջ 10, 16։

13 Հայասանի Հանրապետության հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի Պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ), ֆ. 4047, ց. 1, գ. 1, թ. 7—8։

14 Հրաչ Տասնապետյան, նշվ. աշխ., էջ 22։

կան ազատության, ժողովրդավարության, ընկերվարության, արդար աշխատանքի արմատավորման մասին, անկախության հարցը գիտակցաբար չէր դնում։ Այս կապակցությամբ Հ. Յ. Դաշնակցություն կուսակցության պատմության հետազոտող Մ. Վարանդյանը փաստում էր. «Դաշնակցության ռահվիրաները իբրև զգաստ իրապաշտներ հրաժարվեցին անկախությունից և առաջ քաշեցին ավելի համեստ ու սահմանափակ պահանջներ։ Քրիստափորն ու Ջավարյանը լավ ըմբռնում էին, թե հայկական անկախության պահանջը որքան վրդռիչ ու վանող բնույթ պետք է ստանար հայկական վիլայեթների մահմեդական բնակչության շրջանում»[15]։

Հայաստանի անկախության մասին ոչ մի ակնարկ չկա նաև 1907 թ. կուսակցության 4-րդ ընդհանուր ժողովում ընդունված երկրորդ ծրագրում։ Ավելին, այս ծրագրի նվազագույն քաղաքական պահանջներում, ծրագիր, որը, ի դեպ, աչքի էր ընկնում ավելի իրատեսությամբ և ձևակերպումների հստակությամբ. առաջադրվում էր Թուրքահայաստանի և Ռուսահայաստանի ինքնավարություն (վարչական ապակենտրոնացում, ֆեդերացիա) համապատասխանաբար օսմանյան և ռուսական ֆեդերատիվ պետությունների շրջանակներում[16]։ Ծրագրի ընթերցումից դժվար չէ նկատել, որ նրանում խոսվում էր միայն նվազագույն քաղաքական պահանջների մասին, իսկ հեռավոր նպատակները, որոնց առկայության դեպքում, ամենայն հավանականությամբ, խոսք կլիներ նաև անկախության մասին, գիտակցաբար շրջանցվել են։ Ակներև է, որ տարբեր պետությունների կազմում երկփեղկված պատմական Հայաստանի տարածքում ինքնավարությունների ստեղծման պահանջը տվյալ ժամանակաշրջանի պայմաններում միակ տրամաբանական ու հնարավոր միջոցն էր[17]։

Այդպիսով, Օսմանյան կառավարության դեմ հայրենիքի ազատության, հայ ժողովրդի մարդկային և ազգային արժանապատվության պաշտպանության սուրբ գործի համար «մինչև արյան վերջին կաթիլը»[18] կռվելու կոչով ասպարեզ իջած դաշնակցություն կուսակցության ծրագիրը շնչում է իրատեսությամբ և չափավորությամբ։ Գործնականում մինչև 1918 թ. վերջերը, նույնիսկ այն բանից հետո, երբ Հայաստանի անկախությունն արդեն կատարված իրողություն էր, նա իր ծրագրային և գաղտնական այլ փաստաթղթերում ու հայտարարություններում քաղաքական անկախության պահանջ չի դրել։ Անկախությունը դիտվում էր իբրև հեռավոր նպատակ։ Մեզ պատկերանում է, որ դաշնակցությունն իր այդ չափավոր, բայց հեռատես ու հետևողական ծրագրային պահանջներով ավելի է հետամուտ եղել և իր նպաստն է բերել Հայաստանի անկախության գործին, քան, օրինակ, հնչակյաններն իրենց «Մեծ Հայաստան» ստեղծելու ռոմանտիկ պահանջով ու ցուցադրական գործելակերպով։

Դաշնակցության ծրագրերում քաղաքական պահանջները գործնականում պտտվել են Հայկական հարցի, այն է՝ Արևմտյան Հայաստանում Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի, պատրիարք Ներսես Վարժապետյանի կազմած ծրագրի ոգով (մի քիչ ավել կամ պակաս) բարենորոգումներ անցկացնելու շուրջ, կամ էլ առավելագույնը նպատակ են հետապնդել ինքնավարություն ձեռք բերել համապատասխանաբար օսմանյան կամ ռուսական պետությունների կազմում։ Այստեղից էլ բխում են դաշնակցության կողմից Թուրքիայի և օտար տերությունների ուշադրությունը Հայկական խնդրի վրա բևեռելու նպատակով կատարվող մասնակի ելույթները 1890-ական թվականներին և դարասկզբին։ Սակայն դրա հետ մեկտեղ չպետք է կարծել, թե արևմտահայության ազատագրության նպատակին միտված դաշնակցության ստրատեգիան ու տակտիկան ընդամենը օտար

---

15 Մ. Վարանդյան, Հ. Յ. Դաշնակցության պատմություն, հ. 1, Փարիզ, 1932, էջ 119։

16 Հ. Յ. Դաշնակցության ծրագիր, Կ. Պոլիս, 1908, էջ 17—18։

17 Հրաչ Տասնապետյան, նշվ. աշխ., էջ 33։

18 Դիվան Հ. Յ. Դաշնակցության հ. 1, էջ 88—89։

տերությունների ուշադրությունը գրավող զգայացունց ելույթներ էին (թեև կային նաև այդպիսիները), ինչպես հաճախ միակողմանիորեն ներկայացնում են որոշ հեղինակներ։ Դա հարցի մի կողմն է միայն։ Իրականում Դաշնակցության հարուստ զինանոցն ամենից առաջ ի սպաս է դրվում արևմտահայերի կյանքի ու գույքի, ընտանիքի ու պատվի պաշտպանության, ամեն տեսակ ազգային ու սոցիալական անարդարությունները վերացնելու կամ մեղմելու նպատակներին։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Հ. Յ. Դաշնակցություն կուսակցությունը անցյալ դարավերջի և XX դ. սկզբների իր ծրագրային փաստաթղթերում անկախության քաղաքական պահանջ չի դրել և Հայաստանն անջատելու ձգտում չի ունեցել։ Այս տեսակետից նրա մերձակա քաղաքական պահանջը (ծրագիրը) եղել է Երևմտահայաստանում 61-րդ հոդվածի կամ 1895 թ. մայիսի 11-ի նախագծի ոգով բարեփոխությունների իրականացումը կամ էլ՝ Հայաստանի լայն ինքնավարության ձեռք բերումը։

Ինչ վերաբերում է դաշնակցության և Ռուսաստանի փոխհարաբերություններին, ապա պետք է ասել, որ մինչև դարասկզբի՝ 1903 թ. հայտնի դեպքերը, դաշնակցության համար ռուսաստանը և Արևելյան Հայաստանը, կամ ինչպես ասում են «Ռուսահայ խնդիր» չի եղել և մինչև 1904 թ. Սոֆիայում կայացած կուսակցության 3-րդ ընդհանուր ժողովը որևէ լուրջ հիշեցում չկա այդ մասին։ Միայն ցարական կառավարության հայահալած ու [illegible] պահվածքը հարկադրեց դաշնակցությանը՝ տեր ու պաշտպան լինելու նաև արևելահայության իրավունքներին ու շահերին։ Արդարև, այդ շրջանում ցարիզմի վարած ընդգծված հակահայկական քաղաքականությունն էր հիմնական պատճառը, որ դաշնակցության խորհուրդը հարկադրված ընդունեց (մշակեց) «Կովկասյան նախագիծը» և փաստորեն կուսակցությունն սկսեց կռվել երկու ճակատով՝ թե՛ թուրքական բռնապետության, թե՛ ռուսական ինքնակալության դեմ[19]։ Այնուհետև, մինչ այդ էլ ռուսական իշխանությունները հայ ժողովրդին և նրա գլխավոր կուսակցությանը մեղադրում էին անջատողականության, անհավատարմության, խառնակչության մեջ և անգամ հայ քաղաքական ու մարտական ուժերի դեմ արդյունավետ պայքարելու նպատակով համագործակցում էին թուրքական իշխանությունների հետ։ Մինչդեռ, մինչև 1903 թ. դաշնակցությունը Ռուսաստանի հանդեպ անվստահություն, էլ չենք ասում անջատողականության ոչ մի առիթ չէր տվել։

Գրեթե նույն կերպ, ինչպես արդեն ասվեց, դաշնակցությունն անջատական ոչ մի պահանջ չէր դնում նաև Թուրքիայի առջև՝ չնայած վերջինիս վարած քաղաքականությունը, և ցղթայող վարչակարգը շատ ավելի ծանր ու կործանարար էին արևմտահայության համար։ Բայց հաշվի առնելով իրական հանգամանքները, դաշնակցությունը ոչ միայն Թուրքիայից Արևմտահայաստանի անջատման և անկախության պահանջներ չդրեց, այլև, դրսևորելով իրատեսություն և ողջախոհություն, պատրաստակամություն հայտնեց և անգամ մի քանի տարի (1908—1911) համագործակցեց իշխանության եկած Երիտթուրքերի հետ։ Ինչքան էլ անողոք և իրարամերժ լինեն այդ երկու կուսակցությունների ժամանակավոր մերձեցման ու համագործակցության մասին դնահատականները, գտնում ենք, որ տվյալ կոնկրետ պատմաքաղաքական պայմաններում, դեպքերի ու իրադարձությունների տվյալ կտրվածքում, դաշնակցությունը ճիշտ է վարվել՝ մերձենալով ու համագործակցելով իթթիհատական կուսակցության հետ։ Դա քաղաքական մեծ դաս ու դպրոց հանդիսացավ դաշնակցության հետագա գործունեության համար։

Դաշնակցության օրինակով հայ քաղաքական մյուս կուսակցությունները ևս չափավորեցին իրենց քաղաքական պահանջները և աշխատեցին հանդես գալ միայն օրինականության և ազատականության շրջանակներում[20]։

---

19 Նախագիծ կովկասյան գործունեության, Ժնև, 1906, էջ 3—4։

20 Սահմանադրական-Ռամկավար կուսակցության ծրագիր, Պոլիս, 1910, էջ 8—11, ծրագիր Ս. Դ. Հնչակյան կուսակցության (Տաճկահայաստանի համար), Կ. Պոլիս, 1910, Ա. Ս. Համ-

Այնպես որ դաշնակցությունը, իր առաջադրած քաղաքական չափավոր պահանջներով և թուրքական նոր իշխանությունների հետ համագործակցելու պատրաստակամությամբ, աշխատել է անվստահության և թշնամանքի ոչ մի առիթ չտալ թուրքական կառավարությանը։ Անգամ նա լռությամբ կուլ տվեց 1909 թ. Ադանայի 20 հազար հայերի կոտորածի «դառը հաբը» և չփոխեց իր գործակցությունը «Իթթիհատի» հետ։ Մինչդեռ երիտթուրքական պարագլուխներն այդ ամենին պատասխանեցին սկզբում կեղծ բարեկամությամբ ու անվստահությամբ, իսկ հետագայում՝ անսքող թշնամանքով ու ջարդերով։

Այսպիսով, մինչև առաջին համաշխարհային պատերազմը, դաշնակցությունն Արևմտյան Հայաստանի՝ Թուրքիայից քաղաքական անջատման, առավել ևս, անկախության պահանջ չի բարձրացրել և այդ իմաստով անհիմն են այն բոլոր թուրք և ոչ թուրք հեղինակների «ամբոխային տրամաբանության»[21] վրա հիմնված ենթադրություններն ու մեղադրանքները, թե իբր Արևմտյան Հայաստանին ու արևմտահայությանը բաժին հասած «ցավալի», «տխուր» ճակատագիրը հետևանք էր առաջին հերթին հայ ժողովրդի զլխավոր կուսակցության վարած թշնամական, անջատական, անկախական, «արկածախնդրական» քաղաքականության։ Ի հերքումն նմանօրինակ մտացածին գաղափարի «Դրոշակը» 1908 թ. իր առաջնորդողներից մեկում գրում էր. «Հայ ժողովուրդը երբեք չի սնուցել «անջատականության» սին ծրագիրներ։ Հայ մարտական կազմակերպությունը երբեք չի քարոզել սեպարատիզմ։ Նրա նպատակը եղել է միշտ՝ ստեղծել Թուրքահայաստանում ժամանակակից ոգով ներշնչված մի իրավակարգ, մի ռեժիմ, հիմնված ազատության, հավասարության և ազգերի համերաշխության վրա»[22]։ «Քսան տարվա,—կարդում ենք Հ. Յ. Դ. մեկ այլ պաշտոնական փաստաթղթում,—ամենաստանգավոր խութերի վրայից խոյացող, միշտ բաց-հակատ, միշտ հպարտ մեր կուսակցությունը չէր թաքցնիր իր անչափազանց ձգտումը, եթե այդպիսին հիրավի լիներ, այլ բացորոշ կերպով կ'արձանագրեր իր ծրագրի մեջ և կմարմնացներ այն իր ամեն մի գործնական քայլում։ Մակայն դաշնակցության ողջ գործունեության ընթացքում, կրավոր թե բանավոր գրականության մեջ, անկարելի է գտնել մի հատիկ փաստ, որ հաստատեր այդպիսի մի ենթադրություն»[23]։

Ինչպես տեսնում ենք, պատմական իրողությունները հակառակն են ապացուցում։ Արևմտյան Հայաստանի և արևմտահայության ողբերգական ճակատագիրը պարզապես հետևանք էր թուրքական (օսմանյան) կառավարության վարած հետևողական հայաջինջ պետական քաղաքականության։

Սակայն այս ամենից չի հետևում, թե դաշնակցությունն առհասարակ հեռու է եղել անկախության գաղափարից, հետամուտ չի եղել այդ վեհ նպատակին։ Որքան էլ դաշնակցությունը գիտակցաբար հրաժարվում էր «անկախության» ծրագրային բանաձևումից, նա ներքուստ ձգտում էր այդ վեհ նպատակին։ «Դաշնակցությունը,—գրել է այդ ժամանակաշրջանի հայ պետական մտածելակերպի ամենանշանավոր դեմք Հ. Քաջազնունին իր իսկ կուսակցությանն անվանարկող գրքում,—իմ խորին համոզումով, միշտ եղել է ու միշտ մնացել-դիտակցորեն թե անգիտակցորեն հայ քաղաքական ազատագրման մարտիկը։ Չի եղել ու չկա ոչ մի իսկական դաշնակցական, որ ներշնչված չլինի անկախության գաղափարով, ավելի ճիշտ՝ անկախության բնազդով»[24]։

բարյան, Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին (19-րդ դարի վերջ—20-րդ դարի սկիզբ), Երևան, 1990, էջ 375—376։

21 Ք. Մ ի ք ա յ ե լ յ ա ն, Հեղափոխական մտքեր, Երևան, 1990, էջ 13—14։

22 Դրոշակ, 1908, № 8, էջ 114։

23 ՀՀ ՀՊԿԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 69, թ. 1։

24 Հովհ. Քաջազնունի, Հ. Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Գուրեղ, 1923, էջ 67։

Դաշնակցության համար մինչև 1918 թ. Հայաստանի անկախության հրռչակումը ավելի մեծ կարևորություն է ունեցել ազգապահպանության խնդիրը։ Հայապահպանության խնդրին էր ուղղված դաշնակցության մարտավարությունը՝ սկսած հայդուկային (զինական) խմբեր ու զենք Արևմտահայաստան՝ «Երկիր», փոխադրելուց, ժողովրդին զինելուց և ինքնապաշտպանական մեծ ու փոքր մարտեր մղելուց, վերջացրած հայ եկեղեցու գույքի պաշտպանությանն ուղղված դիմադրական ելույթներով և հայ-թաթարական ընդհարումների ժամանակ հայերի պայքարի հմուտ և անձնուրաց ղեկավարումը։ Ըստ դաշնակցության հայտնի գործիչ Ռ. Տեր-Մինասյանի գնահատումների՝ դաշնակցության ծրագրերում առաջնային պլանում եղել են նախ հայության և հայրենիքի պահպանության, ապա հետո՝ անկախության ու պետականության հիմնախնդիրները[25]։

Առաջին աշխարհամարտի տարիներին նույնպես դաշնակցությունը կուսակցությանը մտահոգող գլխավոր խնդիրը ոչ այնքան անկախությունն, որքան Արևմտյան Հայաստանի և արևմտահայության ճակատագրի հիմնահարցն էր։ Այդ ընթացքում թաքնավարության պահանջը միանգամայն իրական և ընդունելի էր։ Սակայն 1917 թ. ռուսական աշխարհացնցող իրադարձությունները, դեպքերի կտրուկ, սրընթաց զարգացումը դաշնակցությանն ինքնաբերաբար կանգնեցրին ոչ միայն անկախության գաղափարի նյութականացման, այլև արդեն պատրաստ իրականության առջև։

1918 թ. մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի կոնդրատիվ պայմանագիրը առաջ ցնցուղ եղավ հայ ռուսամետ քաղաքական կուսակցությունների վրա։ Միակ քաղաքական ուժը, որն այդ բարդագույն կացության անխուսափելի հետևանքներ տվությամբ իր դիրքորոշմամբ անկախության, ժողովրդի ճակատագրին ինքնուրույն անդրադառնալու կոչված, դաշնակցություն կուսակցությունն էր։ Եթե սկզբնական շրջանում դաշնակցության մեջ ևս անկախության խնդրում եղել են մտավախություն արտահայտող առանձին գործիչներ (Ս. Վրացյան, Ե. Ահարոնյան, Ռ. Տեր-Մինասյան, Ա. Բաղալյան և ուրիշներ)[26], ապա դա պետք է բացատրել 1918 թ. գարնանը, Թուրքական արշավանքի պայմաններում հայ ժողովրդի համար ստեղծված չափազանց բարդ քաղաքական վիճակով, որի ժամանակ «անկախությունը կարող էր ավելի ևս ծանրացնել կացությունը»[27]։

1918 թ. մայիսի վերջերին Հայոց ազգային խորհուրդը տարակուսում էր անկախության խնդրում և դրա համար կային լուրջ հիմքեր։ Հայ ժողովրդի հիշողության դաշտում էր գտնվում 1,5 միլիոն արևմտահայերի կորուստը, թշնամու զորքը գտնվում էր Սևանի մոտերքում և թույլ ու անօգնական Հայաստանի անկախության հռչակումը, առանց քաղաքական ծանրակշիռ դիրքորոշումների ու երաշխիքների, կարող էր լուրջ սպառնալիքի տակ դնել մնացյալ հայության գոյությունը։

Հակառակ հայերի, անկախության հարցում ամենևին չտատանվեցին վրացիները և թաթարները։ Սրանք չերկմտեցին այն պարզ պատճառով, որ արդեն ունեին իրենց հովանավոր պետությունները՝ հանձինս Գերմանիայի և Թուրքիայի։ Այդ էր պատճառը, որ մայիսի 28-ին Հայոց ազգային խորհրդի ընդունած պատմական հայտարարության մեջ որոշակիորեն չէր շեշտվում անկախության հանգամանքը։ Այս տարակուսանքների ու մտավախությունների առկայությամբ հանդերձ, մենք չենք կիսում այն հեղինակների տեսակետը, ովքեր Հայաստանի անկախությունը դիտում են իբրև զուտ արտաքին ուժերի թելադրանք[28]։ Այսուհանդերձ, 1918 թ. մայիսի 28-ին անկախության

25 Ռուբեն, Հ. Ց. Դաշնակցության կազմակերպությունը, Աթենք, 1935, էջ 17։

26 Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 154—156, Ա. Բաղալյան, Էջեր Հայաստանի անկախության պատմությունից, Գահիրե, 1959, էջ 7։

27 Հայաստանի Հանրապետության պետական կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև՝ ՀՀՊԱ), ֆ. 200, ց. 1, գ. 644, թ. 1։

28 Ա. Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերին, Փարիզ, 1947, էջ 435, Մ. Սերոբյան, Հայաստանի անկախության առթիվ, Գահիրե, 1950, էջ 9—10 և ուրիշներ։

հռչակումից հետո հայ ժողովուրդն իր մեծամասնությամբ՝ (հատկապես գաղութահայությունը, գաղթականությունը, Արարատյան դաշտի բնակչությունը) անկախությունն ընդունեց անվարան[29]։ «Անկախ Հայաստանի գաղափարը,— եզրահանգում էր Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետ Հ. Քաջազնունին,—այնքան ոգևորած էր նրան (հայ ժողովրդին—Ա. Հ.), որ այդ անկախությունը ամրապնդելու համար նա պատրաստ է ենթարկվել անտրտունջ, ամենածանր զրկանքների և ամենամեծ զոհաբերությունների»[30]։

Հաշվի առնելով առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո Հայկական հարցի համապարփակ լուծման համար ստեղծված նպաստավոր ռազմաքաղաքական և դիվանագիտական պայմանները՝ Հ. Յ. Դաշնակցությունը, իբրև Հայաստանի Հանրապետության հիմնական կառավարող կուսակցություն, Հայաստանի ամբողջությունը վերականգնելու նպատակով առաջ քաշեց և պաշտպանեց Հայաստանի երկու հատվածների (ռուսահայ և տաճկահայ նահանգների) միավորումից Միացյալ և Անկախ Հայաստան ստեղծելու մտային գաղափարը։ Արդեն 1919 թ. փետրվարին Երևանում գումարված Արևմտահայերի երկրորդ համագումարում ընդունված քաղաքական բանաձևում առաջին անգամ օգտագործվում է «Ազատ և Միացյալ Հայաստանի անկախություն» պլատֆորմը[31]։ Իսկ 1919 թ. մայիսի 28-ին, Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման տարեդարձի օրը, հանրապետության կառավարության նախագահի պաշտոնակատար Ալ. Խատիսյանը պաշտոնապես հրապարակեց Հայաստանի բաժան-բաժան մասերի միացման և «Միացյալ ու Անկախ Հայաստանի մասին» պատմական հայտարարությունը[32]։

Անկախության գաղափարը՝ Միացյալ Հայաստան ստեղծելու պահանջով իր վերջնական ծրագրային մարմնավորումը ստացավ 1919 թ. աշնանը, առաջին անգամ Երևանում գումարված Հ. Յ. Դաշնակցության Թ (9-րդ) ընդհանուր ժողովի որոշումներում, այսինքն այն բանից հետո, երբ Հայաստանի անկախությունը արդեն մեկ տարուց ավելի կատարված փաստ էր։

Համագումարը հաստատակամություն արտահայտելով Հայաստանի անկախության ու Հայկական հարցի լուծման խնդիրներում և հանդիսավորապես նվիրագործելով Անկախ և Միացյալ Հայաստանի հայտարարությունը, որոշեց «չեղյալ համարել կուսակցության նվազագույն ծրագրի Ռուսահայաստանի և Տաճկահայաստանի վերաբերյալ քաղաքական պահանջները, իսկ ամբողջական ծրագրի վերաքննությունը հետաձգել հաջորդ՝ Ժ (10-րդ) Ընդհանուր ժողովին»[33]։

Այդպիսով, կուսակցության 9-րդ ընդհանուր ժողովը շրջադարձային, պատմական եղավ այն իմաստով, որ փաստորեն առանց կենսագործման չեղյալ համարվեց 1907 թ. Վիեննայի 4-րդ ընդհանուր ժողովում ընդունված նվազագույն ծրագրի քաղաքական պահանջների բաժինը՝ Հայաստանի երկու հատվածների ինքնավարության մասին և դրա փոխարեն որդեգրվեց Հայաստանի անկախության պահանջը։ Սկսած այդ պահից դաշնակցությունն իր դրոշի վրա պարզեց «Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստանի» նվիրական նպատակը։

Կուսակցության համաժողովը, բանաձևելով անկախ ու միացյալ Հայաստանի ստեղծման մասին պահանջը, ելնում էր այն հաստատ համոզումից, որ «ստեղծված պայմաններում Հայաստանի անկախությունը հայ աշխատավորության ֆիզիկական ապահովության և քաղաքական ազատագրության միակ գրավականն է»[34]։ Ի դեպ՝ բնորոշ է, որ այդ նույն ընդհանուր ժողովի՝ Ղարաբաղի և Զանգեզուրի վերաբերյալ ընդունված բանաձևում հայկական այդ տարածքները համարվում էին «անբաժանելի մասը Անկախ և Միացյալ

29 Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, հ. է (7), Լոս-Անճելես, 1952, էջ 151, 165։

30 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 498, թ. 54։

31 Համառոտ տեղեկագիր Արևմտահայ երկրորդ համագումարի, Երևան, 1919, էջ 13։

32 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 84, գ. 282, թ. 10։

33 Քաղվածքներ Հ. Յ. Դ. 9-րդ Ընդհանուր ժողովի որոշումներից, Երևան, 1920, էջ 7։

34 Ռուբեն, նշվ. աշխ., էջ 205։

Հայաստանի Հանրապետության»[35]։ Նորընտիր բյուրոյին հանձնարարվեց «բոլոր ծայլերը առնել Զասգեղուրն ու Վարաքաղը միացնելու հանրապետությանը»[36]։ Դրա հետ մեկտեղ, դաշնակցությունը, հետամուտ լինելով Անկախ և Միացյալ Հայաստան հիմնելու գաղափարին, ոչ 9-րդ համագումարում և ոչ էլ հետագայում ընդունված որոշումներում ու քաղաքական ծրագրերում պաշտոնապես ծովից ծով Հայաստան ունենալու պահանջ չի դրել, թեև մի կարճատև շրջանում նրա շարքերում ևս (հանձինս հանրապետության ղեկավարության և Ա. Ահարոնյանի գլխավորած կառավարական պառլիրակության), համակերպվելով ժողովրդի, հատկապես գաղութահայության կամքին, եղան ոգևորության ու զգացմունքային գայթակղության առանձին պահեր[37]։ Հետագայում ճիշտ էր նկատում Վ. Նավասարդյանը՝ գայթակղության նման դրսևորումները գնահատելով որպես «շեղում կուսակցության հիմնական քաղաքական գծից»[38]։

Ի տարբերություն Հայ ժողովրդական և Հայ Սահմանադրական Ռամկավար կուսակցությունների, որոնք պահանջում էին ծովից ծով Հայաստան՝ Թուրքահայաստանի յոթ վիլայեթների ու Կիլիկիայի հետ միասին, դաշնակցությունը հանդես էր գալիս ավելի համեստ ու իրատես առաջադրանքով. ընդամենը արևմտահայ երեք-չորս վիլայեթ (Վանի, Բիթլիսի, Էրզրումի և մասամբ Տրապիզոնի, առանց ոչ հայաբնակ ծայրագավառների)՝ ծովային ելքով[39]։

Սակայն 1920 թ. աշնանը բոլշևիկյան Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի համատեղ ու լիովին ռազմաքաղաքական միջամտության և Արևմուտքի մեծ տերությունների դրսևորած անհետևողականության ու անտարբերության հետևանքով Սևրի դաշնագրով նախատեսված Միացյալ, Անկախ և Ազատ Հայաստանի գաղափարը ոչ միայն չիրագործվեց, այլև աշխարհի շատ երկրների կողմից արդեն պաշտոնապես ճանաչված Հայաստանի Հանրապետությունը կորցրեց իր անկախությունը և խորհրդայնացվեց։ Բայց այդ բոնի գործողություններն բնավ չսասանեցին դաշնակցության հավատը Հայաստանի հետագա անկախության՝ Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստան կերտելու նկատմամբ. վկա՝ 1921 թ. փետրվարի համաժողովրդական ապստամբությունը և դրա շնորհիվ ամիս ու կես ազատ ու անկախ Հայաստանի վերահաստատումը։

ИДЕЯ НЕЗАВИСИМОСТИ В ПРОГРАММАХ АРМЯНСКОЙ РЕВОЛЮЦИОННОЙ ПАРТИИ ДАШНАКЦУТЮН (1890—1920 гг.)

А. М. АКОПЯН

Резюме

Идея независимости прошла своеобразную эволюцию в программных документах и в практической деятельности партии АРФ (Дашнакцутюн). Исходя из политических и тактических соображений, партия в своих первых программах сознательно не требовала отделения и независимости Западной, и тем более Восточной Армении, хотя в своей практической деятельности она боролась за освобождение западных армян от османского ига.

После событий 1917—1918 гг. в России и в Закавказье Армения приобрела независимость, и партия Дашнакцутюн на протяжении двух с половиной лет руководила первой независимой Республикой Армения (1918—1920 гг.), соответственно внося изменения в свои программные требования.

35 Նույն տեղում։

36 Ասպարեզ, 28/29. V, 1992։

37 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 183, թ. 7, գ. 291, թ. 28։

38 Վ. Նավասարդյան, Դաշնակցության քաղաքական ուղին, Գահիրե, 1925, էջ 29։

39 Ա. Բաբալյան, նշվ. աշխ., էջ 34։